


“ԹՈՂ ՏՈՒՔԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԲՆՈՒ ԳԱՆ” ԳՈՒԿ • ԵՐ • 16 :

ՀԱՏՈՐ Ժ.

ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1881

ԹԻՒ 6



**ՊՕՄՊԵԻ**

Մեր ընթերցողք հարկաւ լսած են այն մեծ աղէտը որ մտերս պատահեցաւ Քիսս կողմէն մէջ, որ ահաւոր երկրաշարժ մը մի քանի վայրկեանի մէջ հիմնայատակ ըրաւ շէնքերն, և քանի մը հազար մարդիկ փրատակաց ներքեւ մնալով մեռան, և աւելի շատ մարդիկ վիրաւորուեցան :

Այս յօդուածին վերաբերեալ երկու պատկերներու մէջ կը տեսնենք թէ իբր 1800 տարի առաջ հրաբուգի մը բորբոքին ինչ ահաւոր աւերում գործեց : Քրիստոսի ծննդեան 79 թուականին խաւիոյ Նաբոի քա-

ղաքին մտա Ղեսու՛վ հրաբուգի լերան մտա կար գեղեցիկ քաղաք մը որ կը կոչուէր Պօմպէի : Այս քաղաքն ունէր իբր 15,000 բնակիչ : Երուտաղեմայ Հռովմայեցիներէն առնուելէ և սաճարին կործանուելէն հաջիւ տասր տարի ետքն օգոստոս անոյ Չէրորդ օրը յիշեալ քաղաքին բնակիչք զգացին որ երկիրը կը շարժէր, ծովը այսր անդր կը տատանէր, սեւ ամպեր կը ծածկէին լեռը, և հրաբուգիք կը սկսէր իր բերնէն դուրս հոսեցնել մօխիր, լաւա և ցեխ : Բնակիչներէն շատերը փախչելով աղաւթեցան, բայց ոմանք իրենց դանձերն աղատելու համար ուշանալով քաղա-

քին հետ մէկտեղ թաղուեցան մօխիրին ներքեւ : Բոլոր շէնքերը մնացին աւելի քան 15 սաք թանձր մօխիրէ խաւի մը ներքեւ : Քաղաքը շուտ մտալուեցաւ, և շատ տարիներ անցնելէ ետքը ոչ որ գիտէր թէ ուր էր այն քաղաքին տեղը : 1748 ին, քաղաքին կործանումէն գրեթէ 17 դար ետքը քանի մը մարդիկ շրճոր բանալու համար գետինը փորելով գտան քանի մը արձաններ և կորսուած քաղաքին քանի մը մնացորդները : Անցեալ յիսուսն տարուան մէջ իտալիոյ կառաւարտ թիւեր շատ ստակ ծախք ըրաւ լերցնելու համար մօխիրն և հազը որ ծածկեցին քաղաքը : Քաղաքին գրե-

Թէ կէսն երեւան հանուած է : Առաջին պատկերը կը ցուցնէ մօտերս գետնին տակէն հանուած տուներ : Շէնքերն էին քարէ , բայց ձեղունները փայտէ , հիմա միայն քարէ սիւներն և պատերը մնացած են :

Երկրորդ պատկերը կը ցուցնէ քաղքին այն մասն որ հիմա երեւան հանուած է : Փողոցները սաղայատակ են , և երկու կողմերն բարձր ճամբաներ կան հեռի անցողներու համար : Ուր որ փողոցներն իրար կը կարեն , հան կան քարի կտորներ որպէս զի մարդիկ կարենան փողոցն անցնիլ առանց կրօնելու ցերի : Նարոյի մեծ մուսա-

ջանային իրենց հարստութեան մէկ մասը տանել իրենց հետ : Գանուած են մարմիններ այնպիսեաց որ զինուոր էին , և մեռան առանց ջանալու փախչիլ , քանզի չուզեցին թողլ իրենց սեղերն ուր դրուած էին իրենց զինուորական պարսըը կատարելու համար : Ամէն տարի հազարաւոր այցելուք կ'երթան ի Նարոյի մուսարանին մէջ տեսնելու այն հին քաղաքին մնացորդները :

ԱՍՏՈՒԱԾ ՄՕՏ Է

Տղայք , երբ կը խորհիք Աստուծոյ վրայ , ի՞նչ է ձեր խորհուրդը . զԱս-

հայրը կամ մայրը ձեր վրայ կը նայէր , շատ անգամ պիտի չգործէիք յանցանք զոր կը գործէք խորհելով թէ ձեր հայրն և մայրը չեն տեսներ : Բայց կարող չէք բան մը ծածկել Աստուծմէ : Յիշեցէք թէ Աստուծոյ աչքը ձեր վրայ է , և զայս յիշելով թերեւս շատ չարիքէ ետ կենաք :

Բայց , ինչպէս որ Աստուած ձեզի մօտ է ձեր մեղքն և յանցանքը տեսնելու , նոյնպէս նաեւ մօտ է ձեզի ներելու երբ կը զղջաք ձեր յանցանքին համար : Եթէ արդարեւ կը ցաւիք որ մեղք գործեցիք , և պատրաստ էք ներում խնդրել Յիսուս Գրիստոսի միջոցաւ , կրնաք ներում

ընդունիլ : Երբ կը զղջաք ձեր մեղքերուն համար և կը հաւատաք Յիսուսի , նոյն վայրկեանին կ'ընդունիք ներումն : Զարմանալի է թէ ինչպէս արագ լուր կը զրկուի հեռագրով մէկ տեղէ ուրիշ հեռաւոր տեղ մը : Բայց Աստուած այնպէս մօտ է իւր ներողութեամբ և սիրովն որ մարդ հեռագրէն աւելի արագ կ'ընդունի ներումն երբ կը զղջայ իր մեղաց համար : Սիրելի տղայք , ինչո՞ւ չե՞ս չը խնդրէք Աստուծմէ ներել ձեր մեղքերը : Այո , Աստուած մօտ է ներելու ձեզ երբ կը զղջաք ձեր մեղաց համար :

Նաեւ Աստուած մօտ է ձեզ օգնելու համար : Մեր այսչափ սխալմունք գործելուն մէկ պատճառն ալ սա է որ շատ անգամ կ'աշխատինք բուն մեր զօրութեամբն ընել ամէն բան : Սիրելի տղայք , դուք Աստուծոյ օգնութեան կարօտ էք ձեր խաղերուն , ձեր դասերուն և եղ յանձ-



րանին մէջ կան շատ մը հնութիւններ որ այս քաղաքին փլատակաց տակէն հանուած են : Այս հնութիւնք են մարմարեայ և պղնձեայ արձաններ , և քաղքին հին ժողովրդեան գործածած ամէն տեսակ գործիքները և ամանները : Հաջի նկաններ կան ճիշդ այնպէս ինչպէս թողուցած են հացադորձք փուռերու մէջ երբ փախած են քաղաքէն : Կան նաեւ մարդոց մարմիններուն ձեւերն : Այս մարդիկ մոխրին և ցեխին տակ թաղուած մնացին , և անոնց մարմինը կորսուած և փոշի դարձած է , բայց մարմնոյն ձեւն մնացած է , Ասոնց քով գտնուած են բաւական ոսկի դրամներ , և կը կարծուի թէ այն դրամներուն տէրերը կը

տուած ձենէ հեռու երկինքի՞ մէջ , թէ ձեզ մօտ կը կարծէք : Արդարեւ Աստուած երկինքն է մինչ մենք ենք երկրի վրայ : Երկինք Աստուծոյ բնակարանն է , բայց մեր երկնաւոր Հայրը նաեւ մեզի մօտ է :

Որովհետեւ Աստուած մեզի մօտ է , կը տեսնէ զմեզ երբ յանցանք կը գործենք : Չեմ ուզեր բնել թէ Աստուած չէր կրնար մեր մեղքը տեսնել եթէ մենէ հեռու ըլլար , քանզի Աստուած կը տեսնէ և զիտէ աւմէն բան : Այլ կ'ուզեմ յիշեցնել թէ Աստուած միշտ մօտ է ձեզի , և զիտէ ամէն յանցանք , զոր կը գործէք , և դուք չէք կարող բան մը ծածկել Աստուծմէ : Եթէ խորհէիք թէ ձեր

նուած ամէն գործի մէջ : Մի խորհիք թէ որովհետեւ այն բաները արդայոց ձեռքով կը կատարուին , անկարելորդ բաներ են : Այն բաներն այնչափ կարեւոր են ձեզ որչափ աւելի մեծ բաները չափահաս մարդոց համար կարեւոր են : Եւ եթէ այն բաները կարեւոր են ձեզ համար , սպա ուրեմն դուք Աստուծոյ օգնութեան կարօտ էք զանոնք բոլոր արժանոյն կատարելու համար : Արդ , Աստուած մօտ է ձեզ օգնելու և զիտէ ձեր կարօտութիւնները : Աստուած պատրաստ է ձեզ օգնելու , բայց օգնութիւն չէք ընդունիր , վասն զի օգնութիւն չէք խնդրեր Աստուծմէ : Եթէ խնդրէք պիտի արուի ձեզ , քան-

զի չկայ մէկն որ Աստուծոյ օգնու-  
թիւնը խնայած է և ի դերու երած  
է : Ինչ քաղցր բան է ձեզ օգնու-  
կան ունենալ ձեր խաղերուն մէջ ձեր  
երկնաւոր Հայրն, որպէսզի պահէ ըզ-  
ձեզ չար, բիրտ և ամարդի ըլլալէ,  
ձեր գասերուն մէջ որպէս զի փու-  
թաջան ընէ զձեզ, և ձեր ամէն պար-  
տաւորութեանց մէջ որպէսզի հա-  
ւատարիմ ըլլաք :

Այո՛, սիրելի տղայք, Աստուած  
ձեզի մօտ է : Յիշեցէք զայս :

Փիղ

2.

Փիղը միջին հասշուով կ'աւորի 80  
տարի, բայց կ'ըստի թէ, մինչեւ 100  
—150 տարի ապրող փիղեր կան :  
Գերութեան մէջ փիղն ընդհանրա-  
պէս շատ հիւանդատ կ'ըլլայ և նուազ  
կ'ապրի : Չաղն ծնած ստեն երեք  
ոտք բարձր կ'ըլլայ, և երկու տարիէն  
աւելի իւր մօր կաթն կը ծծէ : Փղի  
ձազը մինչեւ Չարորդ տարին կը մեծ-  
նայ և յայնժամ իւր կատարեալ հա-  
տակին հասած կ'ըլլայ :

Այս կենդանին շատ կը սիրէ բը-  
րինձ և շաքարի եղէգ, և շատ փաս  
կը հասցունէ այդ տնկոյ արտերուն  
ուր կերածէն աւելի կը կոխտէ իւր  
կոպիտ ոտիքն : Չայն վախցնելու  
միակ կերպն կրակ վառել է, ուստի  
բնիկներն իւրեանց արտերուն բոբը-  
տիքն կրակ կը վառեն փիղերը փախ-  
ցունելու համար :

Փիղն զիւրաւ կ'ընտանենայ, և  
յայնժամ մեծ օգուտ կ'ընէ մարդ-  
կութեան : Փիղ բանելու մի կերպն  
սա է : Այնպիսի տեղ մի ուր փիղք  
սովոր են զիշերն արածուելու, մեծ  
փոս մի փորելով վրան թեթեւ բա-  
նելով կը ծածկեն : Փիղն փոսին մէջ  
կ'ընայէ ետքը զայն հոն կը թողուն  
մինչեւ որ անթեւալով և ծարաւե-  
լով, ստիպուի մարդոց հնազանդել :

Հին ժամանակներն կը գործածէին  
զփիղ պատերազմի մէջ, և անոր վե-  
րայ 32 զինուոր առնելու բաւական  
տնակ մի կը շինէին և այս տնակնե-  
րէն մարդիկ իրարու հետ կը մարտնե-  
լէին : Բայց հրազէնք հնարուելէ հե-  
տէ փիղք չեն կրնար գործածուիլ  
պատերազմի մէջ, քանզի իրաչելով  
կը փախչին, և այսպէս թնամիէն  
աւելի փաս կը հասցունեն իւրեանց  
բանակին : Հիմայ փիղ կը գործա-  
ծուի վազը որսարու, և երբեմն ալ  
ճամբորդութեան համար : Գլխաւոր  
գործածութիւնն է ծանր բեռներ կը-  
րելու և կառք կամ թնդանօթ քա-  
չելու : Փիղը կարող է իւր կունակին  
վերայ 1,000—1,500 քաշ բեռ տա-  
նիլ, և իւր ակուններովն կրնայ 300  
քաշ ծանրութիւն վերցնել, և այս-

պէս վեց ձիէ աւելի գործ կրնայ  
տեսնել, բայց նոյն համեմատու-  
թեամբ ալ կ'ուտէ և օրն 50—60  
քաշ կեր հագիւ կը բաւէ փղին :


Միջին փիղ մի կը վաճառուի 5—6  
հարիւր յերայի, իսկ 1,000—2,000  
իւրայի վաճառուողներ ալ կ'ըլլան :  
Տեսակ մի կայ որ ձերմակ կ'ըլլայ,  
բայց այնչափ հազուադէպ է որ Հնդկ-  
կաստանի ժողովուրդն զայն շատ կը  
յարդէ, և Միանջիններն մինչեւ իսկ  
զայն թագաւորին երկրորդ և թա-  
գուհիէն բարձր սեպելով գեղեցիկ  
պալատներ կը շինեն անոր համար,  
և ժողովրդեան մեծերն զիրենք եր-  
ջանիկ կը համարին եթէ կրնան նմա  
ծառայել : Կը պատմուի թէ տասնեւ-  
վեցերորդ դարուն մէջ ի Սիամ պա-  
տերազմ մի բացուեցաւ այսպիսի փի-  
ղի մի պատճառաւ, որոյ մէջ հինգ

ինչպիսի վտանգաւոր տեղ մի կենայն  
տեսաւ և գողալով դուրս ելաւ : Իսկ  
փիղն կը փայփայէր զինք ցուցունել  
ուղեղով թէ վախնալու բան չկայ :

Ուրիշ փիղ մի ազատ կը պատէր  
փողոցներուն մէջ, և ամէն անգամին  
որ բանջար վաճառող կ'սոջ մի խա-  
նութիւն առջեւէն կ'անցնէր՝ անկէ մի  
քանի կտոր բանջար կ'ընդունէր : Օր  
մը այս փիղն կատարելով ինկաւ փո-  
ղցներուն մէջ : Ամէն օր կը փախ-  
չէր, և կ'ինն ալ անապարելով իւր  
մանուկն փողոցին մէջ մոռցաւ և փա-  
խաւ : Փիղն եկաւ այն տեղ, բայց  
տեսնելով մանկիկն յիշեց որ իւր բա-  
րիք ընդունած տեղն է, և չկոխելէ  
զատ առաւ մանկիկն իւր կնճիթովն  
և դուրս տանեաց վերայ :

Յ. Յ. ՄԱՆԻՍԱՃԱՆ

Այնթաղ



թագաւորներ սպաննուեցան : Ինչ  
խեղճ ժողովուրդ, որ չճանչնալով  
երկնից ու երկրի ստեղծիչն երկրպա-  
գութիւն կ'ընէ նորա արարածոց :

Փիղն շատ խելացի կենդանի մ'է,  
մանաւանդ իրեն եղած բարիքները  
բնաւ չմոռնար : Կը պատմուի որ Հնդկ-  
կաստանցի զինուոր մի սովորութիւն  
ունէր իւր ընդունած կերակրէն մաս  
մի տէրութեան փղերէն մէկուն տալ :  
Օր մի այն զինուորն արբենալով բը-  
նուեցաւ որ բանտ ձգուի, բայց ու-  
տիկաններուն ձեռքէն ազատելով վա-  
զեց այն փղին աակ մտաւ, որ իւր  
կնճիթովն արդելոյց հալածողներն զի-  
նուորին մօտենալէ : Արովհետեւ փիղն  
ոտից վերայ կը քնանայ մարդն հոն  
առանց վտանգի կրցաւ քնանալ մին-  
չեւ առտու : Այն առեւն արթննալով

ՀՈՎԱՆՈՑԱԿ

Այսպէս կը կոչուի զարմանալի թը-  
շուն մը որ կը գտնուի հարաւային Ա-  
մերիկայի Ամազոն գետին կղզիները  
Ազուաի պէս սե է, և կը նմանի նաե  
կարճոտն ազուաի, միայն ունի ցը-  
ցունք որոյ ձեւէն առած է հովանոցալ  
անունը : Յցունքը կը բաղկանայ յիսն  
մինչև ութսուն փետուրներէ կապոյս  
ձայրերով : Այս փետուրներն ամէն  
գիւն կը կախուին գլխէն վար գեղե-  
ցիկ պսակաձև հովանոցի նման : Այս  
թռչունը կ'ապրի բարձր ծառերու  
վրայ և վար շիջներ ամենեկին : Կ'ու-  
տէ պտուղ, և եթէ չի գտներ պտուղ,  
կ'ուտէ միջատներ :

ՄՕՐ ՄԸ ՕՐՕՐՆ

Օրօր մանկիկ, քնիկը անուշ,  
Թող գան հրեշտակք պատել քո շուրջ,  
Վերին բարիք առանց թուոյ  
Տեղան վերագ այս երեկոյ :

Յիսուս պահէ քեզ անխնայով,  
Ան որ յերկնից իջաւ մեր քով,  
Մանուկ եղաւ նրման քեզի,  
Բնակեցաւ և յախտի :

Կակուղիկ է քուկին սրբան,  
Բայց շատ կարծր էր նորա կայան .  
Դու փետրապից յանկողին կաս,  
Նա անանոց մըսուր մընաց :

Յիսուս մանուկ էր մինաւոր,  
Ընդ Յովնակայ և ընդ կոյս մօր .  
Գեղջուկ հովիւ ք անունը իջին,  
Որ տալու բան մ'ալ չունէին :

Շուրջը թերեւս առին արջաւք,  
Այլ պահուեցաւ նա անվտանգ,  
Քանզի ունէր նա սպասուոր,  
Խումբ հրեշտակաց սուրբ փառաւոր :

Նա թէ չիջնէր ձայնըդ կրտսել,  
Պիտի լայիւր, մանկիկ, անեղր .  
Այլ թող դադրի քո լաց և ճիչ,  
Զի ունեցար հաս փրկիչ :

Տացէ՛ Աստուած որ երբ մեծնաս,  
Փրկիչ Աստուածդ սիրել գիտնաս .  
Եւ երբ ելլես այս աշխարհէս,  
Տեսնես երեսն ու զինք պաշտես :

Կարմիր այտէդ հազար համբոյր,  
Մօրդ սրտին մէջ վառեն սուրբ հուր .  
Որով այս օր քեզ նուիրեմ,  
Երեսնողին ի Բէթլէհէմ :

Օրօր, մանուկ, սիրուն գառնուկ,  
Վայլէ պահ մի անոյ ջնուկ .  
Որ արթննաս զբարթացեալ,  
Մարմնով մաքով ալ գարգացեալ :

Ա. Մ. Ի. Գ. Ն. Տ. Ա. Բ. Ե. Ր.

յԱին

ՍՈՂՈՄՈՆ ԵՒ ԴԱՐԲԻՆԸ

Դարբինն երբեմն կոչուած է «Թա-  
գաւոր արուեստաւորաց», և կըսուի  
թէ այս անունն ստացած է հետեւ-  
եալ կերպով :

Կ'աւանդուի թէ Սողոմոնի տաճա-  
րին շինութեան առեն այն իմաստուն  
Թագաւորն որոշեց խնջոյք մը տալ  
իւր հոշակաւոր շէնքին մէջ աշխա-  
տող արուեստաւորաց : Երբ արուես-  
տաւորք կը վայելէին համադամ կե-  
քակուրները զորս առատութեամբ  
պատրաստել տուած էր Թագաւորը,  
Սողոմոն սեզանէ ի սեզան կ'երթար  
ևս աւելի աղէկ ճանչնալու իւր ար-  
ուեստաւորները : Արուեստաւորներէն  
միոյն հարցուց .

«Քարեկամ, ի՞նչ է արուեստդ ?»  
«Քառաջադարձութիւն :»  
«Ո՞վ կը պատրաստէ քու գործի-  
ներդ ?»  
«Դարբինը :»  
Ուրիշ արուեստաւորի մը հարցուց

Սողոմոն .

«Ի՞նչ է արուեստդ ?»  
«Որմնադրութիւն :»  
«Ո՞վ կը շինէ քու գործիներդ ?»  
«Դարբինը :»  
Երբորդ մ'ալ ըսաւ թէ քարակոփ  
էր ինք, և իւր գործիներն կը շինէր  
դարբինը : Չորրորդ անձն որուն հար-  
ցուց Սողոմոն, էր նոյն ինքն դարբին-  
նը : Այս անձն էր զօրաւոր մարդ մը,  
որոյ բազուկները բաց էին և մկա-  
նունքն ցցուած էին և կը թուէին եր-  
կաթի պէս ամուր :  
«Քարեկամ, քու արուեստդ ի՞նչ  
է,» հարցուց Թագաւորն :  
«Դարբնութիւն,» պատասխանեց  
մարդը :  
«Ո՞վ կը շինէ քու գործիներդ ?»  
«Քորոր գործիներս ես կը շինեմ,»  
պատասխանեց դարբինը :  
Ասոր վրայ Սողոմոն ըսաւ թէ դար-  
բինն էր Թագաւոր արուեստաւորաց,  
վասնզի ոչ միայն իւր գործիները կը  
շինէր, այլ և բոլոր արուեստաւորք  
ստիպեալ էին անոր դիմել իրենց  
գործիքը շինել տալու համար :

մար, երբ Աստուած օգնական է ա-  
նոնց : Աստուած ըսաւ անոնց թէ ինչ  
ընելու էին : Հրամայեց քահանայի-  
ւանուլ տապանակը, այսինքն արկղ  
ուր էին տամարանեաց օրինաց եր-  
կու տախտակները, և աներկիւղ մըս-  
նել գետին մէջ : Քահանայք բարի և  
քաջ մարդիկ էին : Հաւատացին Աս-  
տուծոյ խօսքին, մտան գետին մէջ  
առանց վախնալու ամենեւին խղճուե-  
լէ : Եւ հա, երբ անոնց ոտուրները  
կոխեցին ջուրը, գետին հոտանք կե-  
ցաւ : Չուրը չվաղեց դէպ ի վար, այլ  
գիզուեցաւ պատի պէս, խորայելի որ-  
դիքը գետին յատակէն իբր ցամաք  
գետնի վրայ քայելով անցան դիմաց :  
Քահանայք կայնեցան գետին մէջանդ  
մինչև որ բոլոր ժողովուրդն անցաւ,  
և երբ ամէն մարդ անվնաս կոխեց  
գետին միւս եզերքը, քահանայք ե-  
կան անոնց ետեւէն և ելան եզերքը :  
Անառն ջուրը սկսաւ հոսել ինչպէս  
առաջ, քանզի Աստուած էր որ հրա-  
մայեց գետին կենալ և թողուլ ժո-  
ղովրդեան անցնիլ գետին մէկ կողմէն  
միւս կողմը : Այսպէս խորայեղցիք  
մտան խոտուցեալ երկիրը Քանան :



Չնչին բաներով  
բնաւ մի վհատիր :  
Եթէ սարդի մը ու-  
տայնը քսան ան-  
գամ կտրի, սարդը  
քսան անգամ ալ  
կը նորոգէ դայն :  
Միւսքդ դիր աղէկ  
բան մ'ընել և պի-  
տի բնես : Մի վախ-  
նար, եթէ ձախողու-  
թիւն դայ վրայ :

ՅՈՐԴԱՆԱՆՈՒ ԵԶԵՐԻՔ

Այս պատկերը կը ցույնէ երկրովի  
գաղտնի մէկ մասը : Չուրը որ կը տես-  
նուի պատկերին մէջ Յորդանան գե-  
տին է :

Խորայելի որդիքը քառասուն տա-  
րի անապատին մէջ թափառեցան, և  
վերջապէս Աստուած տարաւ զանոնք  
այն գեղեցիկ երկիրը զոր խոտուցած  
էր սալ անոնց : Բայց այն երկիրը  
մանեղէն առաջ պարտ էին խորայե-  
լացիք անցնիլ գետէ մը, խորունկ  
գետէ, որոյ երկու կողմերն սպառած  
էին, յատակը քարուտ էր, և ջուրը  
սաստիկ և սրբնիմաց : Այս գետն էր  
Յորդանան : Գետը չունէր կամուրջ,  
և ոչ նաւակներ կային անդին անց-  
նելու, և խորայելի ժողովուրդն, ոչ  
միայն սրբ, այլ և կանայք և տղայք,  
պիտի անցնէին գետը,  
երկիւղ չկայ սակայն մարդոց հա-

Բազում տղայք շատ կը յարգեն  
իրենց սիրելի բարեկամները : Տղաք-  
ներէն ոմանք շատ, և ոյլք քիչ բա-  
րեկամներ ունին այս աշխարհի մէջ :  
Բայց բոլոր տղայք կը սիրեն յաճախ  
խորհիլ այն բարեկամաց վրայ զորս  
ամենէն աւելի կը սիրեն : Սակայն  
կայ բարեկամ մը որոյ վրայ ըստ ար-  
ժանւոյն չեն խորհիր տղայք : Այս  
անձը բարեկամ է ամենուն, բարե-  
կամ է նոյն իսկ այն աղքատ տղոց  
որ բարեկամ չունին աշխարհի վրայ :  
Բարեկամաց ամենէն սիրելին է մեր  
երկնաւոր Հայրը :

Սարմատերդուն ըսած է . «Թէև  
հայրս ու մայրս զիս թողուն, բայց  
Տէրը իս պիտի ընդունի :»

Ամենկայի Միսիստարց ընկերութեան կողմէն  
Խորագիր ճ. Բ. ԿՐԻՆ  
Ֆիլանթրոպիք եօզուշու . Ամերիգան իսան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՅԱՎՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՎՈՐ ՊՅՈՅՆԱՆ